ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

10 օգոստոսի չորեքշաբթի 2022
տպագրության ԺԱ տարի

117
(2597)

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 65

Ռուսաստանի կողմից հայերի նկատմամբ տարվող իբրեւ թե անարդար քաղաքականությունը դեռեւս ուլտրաընդդիմադիր պատգամավորի դիրքերից հանդես եկող Նիկոլ Փաշինյանի խոսույթի հիմնական մեխերից մեկն էր: Ընդդիմադիր Փաշինյանը, օրինակ, 2017-ին այն համոզումն ուներ, որ ՌԴ-ի կողմից ՀՀ-ին մատակարարվող գազի գինն անընդհատ բարձրանալու է: «Գազի գնի բարձրացումը ՀՀ-ին ինքնիշխանությունից զրկելու կամ մեր երկրի ինքնիշխանությունը կաշկանդելու մշտական գործիք է լինելու ՌԴ-ի ձեռքին: Գազի էժան գնի ասեղի վրա ՀՀ-ին նստեցնելն ու վախեցնելը հիբրիդային պատերազմով օկուպացնելու պարզ օրինակ է: 15-20 տարի մեր աչքն են կոխում, թե բա՝ էժան գազը, էժան գազը: Հասկացանք»,- բարձրաձայնում էր ընդդիմադիր պատգամավորը:

Ընդամենը մեկ տարի անց, սակայն, նրա՝ ՌԴ-ի ու ՀՀ-ի հարաբերությունների, ինչպես նաեւ պաշտոնական Մոսկվայի՝ «ՀՀ-ին գազի էժան գնի ասեղի դնելու մասին» պատկերացումները շեշտակի փոխվեցին, ավելին՝ վարչապետ Փաշինյանն անձամբ սկսեց գլուխ գովել, թե Ռուսաստանը պաշտոնական Երեւանին բավականին էժան գնով է գազ վաճառում:

Այսպես, 2018-ի սեպտեմբերի 9-ին, հայտարարում էր, թե Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինն անձամբ է հրահանգել, որ գազը Հայաստանին էժան մատակարարվի: «Դա ինչի՞ համար է արել. որպեսզի Հայաստանի քաղաքացիների համար գազն ավելի մատչելի լինի: Պուտինն ինձ հետ զրույցում նույնիսկ հիշեց, որ նման հրահանգ է տվել Գյումրի կատարած այցից հետո: Շփվելով մարդկանց հետ՝ նա զգացել է, որ գյումրեցիների, ՀՀ քաղաքացիների վիճակն այդքան էլ լավ չէ, ու որոշել է նման քայլով նպաստել մարդկանց սոցիալական վիճակի բարելավմանը»,- իրեն հատուկ գոհունակ ժպիտով հայտարարում էր Փաշինյանը:

Ստացվում է՝ գազի գնի մասին իրարամերժ հայտարարություններով Փաշինյանը հերթական անգամ ստել է:



«Հայաստանի Հանրապետության կրթության մինչեւ 2030 թվականը զարգացման պետական ծրագիրը» արդեն ներկայացվել է խորհրդարանին: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ պատգամավորներն այն կքննարկեն սեպտեմբերին մեկնարկող հերթական նստաշրջանում, երբ խորհրդարանը ետ կգա արձակուրդից: Մենք տեղեկացանք, որ այս օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում, ՀՀ կառավարությունը պետք է հաստատի «Հայաստանի Հանրապետության կրթության մինչեւ 2030 թվականը զարգացման պետական ծրագրից» բխող գործողությունների ծրագիրը, որը կարող է վերանայվել յուրաքանչյուր տարի: Այսպիսով, ծրագրի ներածության մեջ անդրադարձ է կատարվել 2020-ին կորոնավիրուսային հիվանդության եւ 44-օրյա պատերազմի թողած ազդեցությանը կրթության համակարգի վրա եւ ծագած հրատապ խնդիրներին: Ըստ նախարարության ծրագրի՝ հետեւանքները օրակարգ են բերում ոչ միայն կրթական միջավայրի անվտանգությանը, այլեւ կրթական բովանդակությանն առնչվող շեշտադրումների փոփոխության անհրաժեշտություն: Առաջարկվում է, որ մինչեւ 2030 թվականը 3-5 տարեկան երեխաների առնվազն 95 տոկոսն ընդգրկված լինի նախադպրոցական ծառայություններում: Այս ծրագիրն արդեն անցել է հանրային քննարկում, իսկ գլխավոր քննարկումը կանցկացվի խորհրդարանում:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ Ազգային անվտանգության ծառայության կողմից ձերբակալված ՊՆ գեներալ-մայոր Արմեն Հարությունյանի գործով ԱԱԾ-ն նաեւ մեղադրանք է առաջադրել բանակին զենք մատակարարող հայտնի գործարար Դավիթ Գալստյանին՝ Պատրոն Դավոյին, եւ նրա քրոջորդուն՝ Արթուր Բաղդասարյանին: Նախկին ու ներկա իշխանությունների օրոք զենքի առեւտրով ու ներկրմամբ զբաղվող Դավիթ Գալստյանը եւ քրոջորդին կալանքի տակ էին մինչեւ ՊՆ գեներալին կալանավորելը: Այսօր նրանք ազատության մեջ են, իսկ գեներալ Հարությունյանը կալանքի տակ է: Ինչպես, ինչի դիմաց՝ անհասկանալի է: Գալստյանը կարողանում է բոլոր իշխանությունների օրոք հարցեր լուծել, անպատիժ մնալ: Դեռեւս երկու տարի առաջ տեղեկացրել էինք, որ արտերկրում գրանցված Mosston Engineering ընկերության խորհրդի նախագահ Դավիթ Գալստյանը իր ընկերության տնօրեն Արթուր Բաղդասարյանի հետ 2018 թվականի ընթացքում ՊՆ-ին է մատակարարել 1983-1986թթ. արտադրության հրանոթի անորակ արկեր, որոնցով, ըստ ԱԱԾ-ի, հնարավոր չի եղել լուծել մարտական խնդիրներ: Դրանց դիմաց Գալստյանը 1 մլն 83.000 ԱՄՆ դոլար գումար է ստացել: Փաստորեն, չկրակող արկերը պետության վրա վաճառողը ազատության մեջ է:



Նիկոլ Փաշինյանի կառավարությունը պարծենում է Հայաստանում տնտեսական ակտիվության ցուցանիշի աճով՝ մոռանալով գյուղատնտեսության ոլորտի անկման ցուցանիշները: Մեր հանրապետությունում գյուղատնտեսական արտադրանքը, այս տարվա 6 ամիսների արդյունքներով, նվազել է 5.5 տոկոսով՝ կազմելով 291 մլրդ 864.6 մլն դրամ, ընդ որում՝ հիմնական անկումն արձանագրվել է բուսաբուծության եւ անասնաբուծության ոլորտում: «Ժողովուրդ» օրաթերթը ՀՀ վիճակագրական կոմիտեից տեղեկացավ, որ մեր երկրում այս տարվա 6 ամիսներին գյուղատնտեսության եւ ձկնորսության համախառն արտադրանքը կազմել է 351 մլրդ 570.6 մլն դրամ, ինչը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել է 3.4 տոկոսով: Պաշտոնապես բուսաբուծության արտադրանքի ծավալը կազմել է 119 մլրդ 510 մլն դրամ. այն անցած տարվա ցուցանիշից պակաս է 8.8 տոկոսով: Մասնագետները տեւական ժամանակ բարձրաձայնում են՝ այս տարին բարենպաստ չէ գյուղատնտեսության համար, իսկ Նիկոլ Փաշինյանի կառավարությունը ո՛չ խորհրդատվությամբ է գյուղացուն օգնում, ո՛չ դիզվառելիքով եւ ո՛չ էլ սերմացուով: Կառավարությունը մեկ պարկ պարարտանյութի դիմաց վճարեց 9000 դրամ՝ մեծ բաժինը (14.000 դրամ) թողնելով գյուղացու ուսերին:

ԼՈՒՐՋ Է

ԱՐՑԱԽՈՒՄ ՄԱՐԴԻԿ ՄՏԱՀՈԳՎԱԾ ԵՆ

«Ժողովուրդ» օրաթերթի զրուցակիցն է ՀՀ ԱԺ նախկին պատգամավոր Սոֆյա Հովսեփյանը:

-Տիկին Հովսեփյան, 44-օրյա պատերազմից հետո Դուք Արցախում եք հաստատվել, այս օրերին եւս Արցախում եք: Ի՞նչ մթնոլորտ է Ստեփանակերտում՝ Արցախի տարածքից հերթական զիջումն անելու ֆոնին: Ի՞նչ են մտորում մարդիկ, տեղի իշխանությունները:

-Իրականում մարդկանց տագնապը, մտահոգությունները, լարվածությունը շատ է: Մարդիկ շատ լարված են, մտահոգված են, մասնավորապես՝ Բերձորի հարցի բարձրացման հետ համընթաց: Այսինքն՝ սա այն հարցերից է, որ Արցախում շատ լուրջ անհանգստություն է առաջացրել, եւ մարդիկ արդեն անվտանգության խնդիր են բարձրաձայնում, որն արդեն իսկ կար պատերազմից հետո: Սա վերջին հույսն էր, որ եթե գոնե հնարավորություն կար անվտանգ ճանապարհ անցնելու, այդ ճանապարհի անվտանգության հարցը վերջնականապես փակվում է: Կարելի է ասել՝ օգոստոսի 25-ից հետո Արցախը կհայտնվի շրջափակման մեջ, եթե թույլ տան այդ ոճրագործության իրականացումը: Արցախցիները շատ մտահոգ են, եւ այդ մասին, իհարկե, խոսվում է, բարձրաձայնվում է: Թե ինչ են մտածում այդ մասին իշխանությունները, ես որեւէ կերպ չեմ կարող ասել, որովհետեւ չեմ հաղորդակցվում որեւէ մեկի հետ:

-Շատերը զարմանում են հատկապես արցախցիների վրա, որ պատերազմից հետո հերթական զիջումն են հանդուրժում: Ի՞նչ կարող ենք անել առհասարակ բոլորս, որ չենք անում, չնայած որ ասես համատարած թմբիրի մեջ ենք:

-Այո, կարող են շատերը զարմանալ, բայց արցախցիների վրա զարմանալ պետք չէ, զարմանալ պետք է հայ մարդու վրա, թե ինչպես է հարմարվում: Այս խնդիրը միայն Արցախի խնդիր չէ, այս խնդիրը Զանգեզուրի միջանցքի խնդիրն է: Այս խնդիրը կա Սյունիքի մարզում, ինչպես մի քանի օր առաջ վարչապետ կոչվածը նշեց Ղազախի ճանապարհի բացման մասին: Այս նույն խնդիրը Տավուշի մարզինն է, Սյունիքի եւ Վայոց ձորի եւ մնացած բոլոր մարզերինն է: Այստեղ ոչ թե թմբիրի մեջ են մարդիկ, այլ պատերազմից հետո մի մասը վախենում է, որ նորից պատերազմ ու մահ կլինի, մի մասը վախենում է, որ նորից ինչ-որ տարածքներ կզիջեն, բայց մենք տեսնում ենք, որ գրեթե ամեն օր ունենք մահ, վիրավորումներ, գերիներ, մինչ օրս գերիների հարցը լուծված չէ: Ամեն օր ունենում ենք տարածքների կորուստներ, դարձել է սովորական, որ յուրաքանչյուր եռամսյակը մեկ կորցնում ենք տարածքներ: Ինչ վիճակում պետք է լինի մարդը, բացի վախից, անհանգստությունից:

-Այս ամենի ֆոնին Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը «Զանգեզուրի միջանցք»-ի շահագործման նոր ամսաթվի մասին է խոսում: Ի՞նչ նոր սպառնալիքներ կան դեռ:

-Իլհամ Ալիեւը միշտ խոսում է «Զանգեզուրի միջանցք»-ի մասին: Այս մասին լռում է մեր իշխանությունը, բայց իր գործողություններն ամբողջությամբ տանում է «Զանգեզուրի միջանցք»-ի բացմանը, ինչն անթույլտրելի է: Քանի որ բոլորը Հայաստանում շատ անտարբեր ապրում են եւ կարծում են, որ այս խնդիրը միայն Արցախինն է, մի քանի ժամանակ հետո ականատեսը կլինեն, թե ինչպես կառավարության նիստի ժամանակ Նիկոլ Փաշինյանը պլանավորված կներկայացնի եւ հաշվետու կլինի իր պատվիրատուին, թե ինչպես է կործանում Հայաստանը:

Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ

ՋԲՈՍԱՇՐՋԻԿՆԵՐԻ ԹԻՎՆ ԱՎԵԼԱՑԵԼ Է

Հայաստան այցելած զբոսաշրջիկների թիվը մեկ տարվա ընթացքում զգալի ավելացել է: Հայաստան 2022 թվականի հունվար-հունիս ամիսներին ժամանել է 588 հազար 731 զբոսաշրջիկ: ArmLur.am-ը պարզեց, որ Հայաստան Ռուսաստանից զբոսաշրջիկների թիվը 156 հազար 5-ով ավելացել է: Անցյալ տարվա վեց ամիսների ընթացքում ՀՀ Ռուսաստանից այցելել է 95 հազար 30 զբոսաշրջիկ, իսկ այս տարվա նույն ժամանակահատվածում այդ թիվը կազմել է 251 հազար 35: Բացի այս, 4 հազար 760-ով ավելացել են Ֆրանսիայից, 6607՝ Գերմանիայից Հայաստան այցելած զբոսաշրջիկները: Նկատենք, որ Ուկրաինայից եւս ավելացել է ՀՀ այցելած զբոսաշրջիկների թիվը: Ի դեպ, Հայաստան այցելել են անգամ Ադրբեջանից (3 հոգի): Խոսքը ադրբեջանցի պատգամավորների մասին է, որոնք Հայաստան էին ժամանել՝ մասնակցելու Եվրանեսթի խորհրդարանական վեհաժողովի հանձնաժողովների նիստերին: Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի՝ 41 հազար 196-ով ավելացել է Վրաստանից մեր հանրապետություն այցելած զբոսաշրջիների քանակը: Ի դեպ, այս տարվա վեց ամիսներին 2191-ով ավելացել է Թուրքիայից Հայաստան ժամանած զբոսաշրջիկների թիվը: Եթե 2021 թվականի հունվար-հունիսին ՀՀ Թուրքիայից ժամանել է 1150 զբոսաշրջիկ, ապա այս տարվա նույն ժամանակահատվածում նրանց թիվը կազմել է 3341: Սրան զուգահեռ՝ նկատենք, որ Իրանի Իսլամական Հանրապետությունից Հայաստան ժամանող զբոսաշրջիկների թիվն է զգալի ավելացել: ArmLur.am-ը տեղեկացավ, որ 2021-ի վեց ամիսներին Հայաստան այցելել է 26 հազար 544 իրանցի զբոսաշրջիկ, իսկ այս տարի այդ թիվը կազմել է 48 հազար 122: Ի դեպ, զգալի ավելացել է նաեւ Ամերիկայի Միացյալ Նահանգներից Հայաստան ժամանող զբոսաշրջիկների թիվը. մեկ տարվա ընթացքում 6741-ից՝ հասնելով 13 հազար 17: Նկատենք, որ, ըստ Վիճակագրական կոմիտեի, Հայաստանից մեկնողների թիվը եւս ավելացել է 2.9 անգամ: Այս տարվա վեց ամիսներին մեր երկրից մեկնել է 343 հազար 553 զբոսաշրջիկ՝ 2021-ի 118 հազար 85-ի դիմաց:

ԿՐԿԻՆ ԱՆԴՐԱԴԱՐՁԵԼ Է

Անկարայում տեղի ունեցող դեսպանների 13-րդ համաժողովի շրջանակներում հերթական ելույթն ունեցած Թուրքիայի ԱԳՆ-ի ղեկավար Մեւլութ Չավուշօղլուն կրկին անդրադարձել է արցախյան հիմնահարցին եւ հայ-թուրքական կարգավորման գործընթացին: Ըստ Չավուշօղլուի՝ «Ղարաբաղում Ադրբեջանի հաղթանակը» նպաստել է թյուրքական աշխարհի երկրների մերձեցմանը եւ մեծացրել վստահությունը սեփական ուժերի հանդեպ: Խոսելով հայ-թուրքական ու հայ-ադրբեջանական գործընթացի մասին՝ Չավուշօղլուն մասնավորապես ասել է. «Հայաստանի հետ առանձին-առանձին մեր իրականացրած կարգավորման գործընթացներն առաջ ենք տանում համակարգված կերպով եւ ամեն փուլում տեղեկացնում ենք միմյանց ու խորհրդակցում իրար հետ: Տեղն եկած ժամանակ որոշումներ ենք կայացնում, թե ինչ քայլեր պետք է կատարենք կարեւոր հարցերում: Հայաստանին եւս մեկ անգամ զգուշացնում եմ, որ հատկապես խուսափի սադրանքներից: Տարածաշրջանի կայունության, հանգստության ու խաղաղության հարցում Թուրքիան ու Ադրբեջանն անկեղծ են: Այս կարգավորումը Հայաստանի համար էլ է օգտակար: Միայն գեղեցիկ խոսքերով չի լինի, պետք է կոնկրետ քայլեր կատարենք եւ պայմանագրերը կյանքի կոչենք»:

ԼՈՒՐԵՐ

ՊԱՏԳԱՄԱՎՈՐԸ՝ ՀԱՎԱՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԱԺ «Պատիվ ունեմ» խմբակցության քարտուղար Տիգրան Աբրահամյանը սոցցանցի իր էջում գրել է. «Արձանագրենք, որ եռամսյա հավաքներից մեկ շաբաթ է անցել, եւ ունենք հավաքի զորակոչված մեկ զինծառայողի հանկարծամահության դեպք, եւս մեկ զինծառայողի ճակատագիր շարունակում է անհայտ մնալ, որոնողական աշխատանքները Սեւանա լճի հատվածում շարունակվում են: Ինչ-որ մեկը հիշո՞ւմ է, թե ինչ նպատակով են պաշտոնապես անցկացվում այս հավաքները (քաղաքական մոտիվները դեռ մի կողմ). շատ քչերը:

Անունը դնում են ուսումնական հավաքներ, բայց «ուսումնական» բառը փնտրում ու չես գտնում, դրա համար այս հավաքների տակ ամեն ինչ կարելի է փնտրել եւ գտնել, բացի իր բուն նպատակից: Բովանդակության, կազմակերպչականի, կարգապահության մասին չխոսեմ. ամեն ինչ արդեն պարզ է: Հետեւանքները նման դեպքերում ակնհայտ են, ու այս ամենը՝ տարածաշրջանում լարվող իրադրության պայմաններում»:

ԱՆՎՏԱՆԳ ԿԼԻՆԻ՞

Օգոստոսի 25-ին Արցախի Հանրապետության Բերձոր քաղաքը եւ Աղավնո գյուղը հանձնվելու են Ադրբեջանին: Արցախի տարածքային կառավարման նախարար Հայկ Խանումյանն օրերս այցելել էր Բերձոր եւ բնակիչներին տեղեկացրել այդ մասին: Ըստ նախարարի՝ օգոստոսի 25-ին ադրբեջանցիները մտնելու են Բերձոր, իսկ ռուս խաղաղապահները դուրս են գալիս: Բերձորի ճանապարհը փոխարինվելու է նոր այլընտրանքային ճանապարհով:

ՀՈՒ գլխավոր շտաբի նախկին պետ Մովսես Հակոբյանը, խոսելով այլընտրանքային ճանապարհի անվտանգությունից, նկատեց. «Ադրբեջանական կողմն իր ճանապարհն արդեն կառուցել, ավարտել է, մնացել է՝ հայկական կողմն իր ճանապարհը կառուցի: Դեռ ճանապարհի մի հատվածն է կառուցված, այն բաղկացած է երկու մասից: Մի կտորն ադրբեջանական կողմը սարքել է, մնում է՝ հայկական կողմը սարքի, իսկ մյուս կտորը եւս Հայաստանը պետք է սարքի»:

Անդրադառնալով մամուլի այն հրապարակումներին, որ իրեն ԱԱԾ-ն հարցաքննության է հրավիրել ձերբակալված գեներալ-մայորի քրեական վարույթով, Մովսես Հակոբյանը հերքեց. «Ի՞նչ հարցով պետք է հարցաքննության հրավիրեին, ինքս որեւէ բանից տեղյակ չեմ, որեւէ ծանուցում չեմ ստացել՝ հարցաքննության համար»:

ՄԵՂԱԴՐԱՆՔ Է ԱՌԱՋԱԴՐՎԵԼ

Armlur.am-ին հայտնի դարձավ, որ Ա. Հարությունյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2016 թվականի մարտի 18-ին՝ ժամը 15:40-ի սահմաններում, ներկա գտնվելով Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանում իր որդու վերաբերյալ քննվող թիվ ԼԴ/0141/01/14 քրեական գործի դատաքննությանը եւ դրսեւորելով բարոյական նորմերը խախտող վարքագիծ, բազմաթիվ անձանց, դատավորի եւ դատական նիստերի քարտուղարի ներկայությամբ դատաքննության մասնակից, մեղադրող դատախազ Վահե Դոլմազյանի անձն անպարկեշտ ձեւով ստորացնելու դիտավորությամբ աղմուկ-աղաղակ է բարձրացրել, ցուցադրաբար մոտենալով վերջինիս՝ սպառնացել է, ապա Վ. Դոլմազյանի հասցեին հնչեցրել է անձնական վիրավորանքներ՝ նման եղանակով դատարանի նկատմամբ դրսեւորելով անհարգալից վերաբերմունք:

3,5 ՏԱՐԻ՝ ԱՐԳԵԼԱՆՔԻ ՏԱԿ

Շուրջ 3,5 տարի է՝ դատարանը քննում է գործարար Բարսեղ Բեգլարյանի՝ Ֆլեշի Բարսեղի դեմ հարուցված քրեական գործը: Դատարանը 3,5 տարի անց՝ 2022թթ. հունիսի 28-ին, որոշել է պաշտպան Նիկոլայ Հակոբյանի կողմից ներկայացված՝Բարսեղ Բեգլարյանի անշարժ եւ շարժական գույքերը կալանքից հանելու վերաբերյալ միջնորդությունը բավարարել: Ստացվում է, որ գործարարը 3,5 տարի չի կարողացել իր գույքը տնօրինել:

Հիշեցնենք, որ Բարսեղ Բեգլարյանը մեղադրվում է ինքնիրավչության մեջ: Նախնական քննության տվյալներով՝ Բեգլարյանի որդուն՝ Ն. Բեգլարյանին պատկանող «Ֆլեշ Մոտորս» ՍՊ ընկերությունից 2015թ. ընթացքում իրականացվել է առանձնապես խոշոր չափերի գույքի հափշտակություն, որի կատարման մեջ ընկերության սեփականատերն ու հարազատները մեղադրել են «Ֆլեշ Մոտորս» ՍՊ ընկերության նախկին կոմերցիոն տնօրենին եւ պահանջել վերականգնել ենթադրաբար պատճառված գույքային վնասը: Նախնական քննության տվյալներով՝Ն. Բեգլարյանի հայրը՝ «Ֆլեշ» ՍՊԸ-ի սեփականատեր Բարսեղ Բեգլարյանը «Ֆլեշ» ՍՊԸ-ի «Քանաքեռ» բազայի պետ Հ.Հովսեփյանի հետ միասին 2016 թվականի մարտի 28-ին՝ ժամը 09:30-ի սահմաններում, «Ֆլեշ Մոտորս» ՍՊ ընկերության կոնֆերանս սրահում ընկերության նախկին կոմերցիոն տնօրենին մեղադրել է յուրացումներ կատարելու համար: Պատճառված վնասը վերականգնելու նպատակով իրավապահ մարմիններին դիմելու եւ օրենքով սահմանված կարգով ենթադրաբար հափշտակությամբ պատճառված վնասի փոխհատուցումը ստանալու փոխարեն՝ բռնության գործադրմամբ, ինչպես նաեւ կյանքի եւ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելու սպառնալիքով պահանջել է որպես վնասի փոխհատուցում անվանափոխել Երեւան քաղաքի Ազատության պողոտայում գտնվող վերջինիս բնակարանը կամ վճարել 20.000 ԱՄՆ դոլար գումար: Վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրությունը՝ չհեռանալու մասին, իսկ Բարսեղ Բեգլարյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը դատախազությունը փոխել էր անձնական երաշխավորությամբ:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՄՆ–Ն ԴԱՏԱՊԱՐՏԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Քվեբեկից կանադացի սենատոր Լեո Հուսակոսը դատապարտել է Ադրբեջանի ագրեսիան՝ կոչ անելով Կանադային եւ միջազգային հանրությանը խստորեն դատապարտել այն: «Արմենթրես»-ի հաղորդմամբ՝ այս մասին նա գրել է «Թվիթեր»-ի իր միկրոբլոգում:

«Արցախի ժողովրդի վրա Ադրբեջանի հարձակումը 2020 թվականի նոյեմբերի հրադադարի համաձայնագրի վերջին խախտումն է: Ես անհանգստացած եմ Ադրբեջանի վերսկսված ագրեսիայի առիթով եւ կոչ եմ անում Կանադային ու միջազգային հանրությանը խստորեն դատապարտել այն»,- գրել է նա:

«Միացյալ Նահանգներն իր խորը մտահոգությունն է հայտնում Լեռնային Ղարաբաղի շուրջ ինտենսիվ մարտերի վերաբերյալ տեղեկությունների առնչությամբ»,- Վիեննայում ԵԱՀԿ Մշտական խորհրդի հատուկ նիստին հայտարարել է ԵԱՀԿ-ում ԱՄՆ առաքելության ղեկավարի տեղակալ Քորթնի Օսթրիանը՝ արձանագրելով, որ այդ մարտերի հետեւանքով գրանցվել են զոհեր ու վիրավորներ:

«Մենք մոտիկից հետեւում ենք իրադրությանն ու կոչ ենք անում անհապաղ ձեռնարկել քայլեր՝ թուլացնելու լարվածությունն ու խուսափելու հետագա էսկալացիայից:

Ինչպես բազմիցս ենք նշել Մշտական խորհրդում, Միացյալ Նահանգներն ընդգծում է Լեռնային Ղարաբաղի հետ կապված կամ դրանից բխող բոլոր մնացած հարցերի բանակցային, համապարփակ եւ կայուն կարգավորման կարեւորությունը»,- նշել է Օսթրիանը:

Նա հիշեցրել է, որ նախորդ շաբաթ ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինկենը հեռախոսազրույցներ է ունեցել Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի եւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ՝ կոչ անելով դեէսկալացնել իրադրությունն ու ուղիղ շփումներ սկսել՝նվազեցնելու լարվածությունը: «Միացյալ Նահանգները պատրաստ է ներգրավվել ինչպես երկկողմ, այնպես էլ համախոհ գործընկերների հետ, ինչպես նաեւ որպես, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ, նպաստել Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ երկխոսության հաստատմանը եւ օգնել հասնել հակամարտության տեւական քաղաքական կարգավորման»,- նշել է ԵԱՀԿ-ում ԱՄՆ առաքելության ղեկավարի տեղակալը:

Իր հերթին Ադրբեջանի արտգործնախարար Ջեյհուն Բայրամովը նշել է, որ Ադրբեջանի եւ Նախիջեւանի միջեւ կապ կհաստատվի Իրանի տարածքով: Այս մասին հայտնում են ադրբեջանական լրատվամիջոցները՝ վկայակոչելով Ադրբեջանի արտգործնախարար Ջեյհուն Բայրամովի հայտարարությանը:

«Ադրբեջանը Նախիջեւանի հետ կապվելու համար ունի այլընտրանքային ճանապարհ Արաքս գետով՝ շրջանցելով Հայաստանը: Այդ նպատակով, Իրանի հետ պայմանավորվածության համաձայն, Բաքուն արդեն սկսել է Արաքս գետի վրայով առաջին կամրջի կառուցումը»,- նշել է նախարարը

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՎԻՐԱՎՈՐՎԵԼ ԵՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐ

Պայթուցիչի օգտագործման կանոնները խախտելու եւ անվտանգության կանոնները չպահպանելու հետեւանքով վիրավորում են ստացել ՊԲ 2 պայմանագրային զինծառայողներ. տեղեկությունը հայտնում է Արցախի պաշտպանական գերատեսչությունը: Մասնավորապես, վիրավորում են ստացել Գուրգեն Ալյոշայի Դանիելյանը եւ Արթուր Յուրիկի Առուշանյանը: Վիրավորների վիճակը գնահատվում է ծանր: Դեպքի մանրամասները պարզելու համար կատարվում է քննություն: Նշենք, որ օգոստոսի 8-ի լույս 9-ի գիշերը եւ երեկ՝ ժամը 12:00-ի դրությամբ, օպերատիվ իրադրությունը շփման գծում, չնայած պահպանվող լարվածությանը, հարաբերականորեն կայուն է եղել: «Որոշ հատվածներում ադրբեջանական զինուժի ստորաբաժանումները կրկին խախտել են հրադադարի պահպանման ռեժիմը՝կիրառելով տարբեր տրամաչափի հրաձգային զինատեսակներ»,- ասված է հաղորդագրության մեջ:

ԴԱԴԱՐԵՑՐԵԼ ԵՆ

Շիրակցի գերիների ծնողներն ու հարազատները դադարեցրել են երեկ կառավարության մոտ կազմակերպած իրենց բողոքի ակցիան: Նրանք դեռ նախօրեից կառավարության շենքի առջեւ էին: Գերիների հարազատները պահանջում են, որպեսզի քայլեր իրականացվեն, եւ հայրենիք վերադառնան Ադրբեջանում պահվող գերիները: Հիշեցնենք, որ Շիրակցի զինծառայողները գերեվարվել են Խծաբերդում 2020-ի դեկտեմբերի 16-ին՝ եռակողմ հայտարարությունից հետո: Գերիների ծնողները, այլ հարազատներ քանիցս բողոքի ակցիաներ են արել տարբեր գերատեսչությունների շենքերի մոտ՝ պահանջելով, որպեսզի իրենց հարազատները վերադառնան հայրենիք: Պաշտոնական տվյալներով՝ առնվազն 40 անձ դեռեւս գերության մեջ է, իսկ ոչ պաշտոնական տվյալներով՝ գերիների թիվը շատ ավելին է:

ՊԵՏՔ Է ՀԵՌԱՑՆԻ

«ԱՄՆ-ն պետք է միջուկային զենքը հեռացնի երրորդ երկրներից»,- հայտարարել է ՌԴ ԱԳՆ-ի Ջենքի չտարածման եւ վերահսկողության վարչություն փոխտնօրեն Իգոր Վիշնեւեցկին: «ԱՄՆ միջուկային զենքը պետք է բերվի ազգային տարածք»,- ասել է Վիշնեւեցկին ՄԱԿ-ում: Նա ընդգծել է, որ ՆԱՏՕ-ն բացահայտորեն իրեն հռչակում է որպես միջուկային դաշինք, եւ որ ԱՄՆ միջուկային զենքը գտնվում է ոչ միջուկային երկրների տարածքում: Վիշնեւեցկին սա անվանել է գործոն, որը բացասաբար է անդրադառնում անվտանգության վրա, մեծացնում է միջուկային հակամարտության վտանգը եւ արգելակ է զինաթափման համար: Նա հավելել է, որ ԱՄՆ-Մեծ Բրիտանիա-Ավստրալիա AUKUS գործընկերությունը նախադրյալներ է ստեղծում Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում սպառազինությունների մրցավազքի նոր փուլի մեկնարկի համար:

ՈՒՇԱԳՐԱՎ ԻՐԱՎԻՃԱԿ

ՄԵՂԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԿԱՆԳՆԵԼ ԵՆ ԽՆԴՐԻ ԱՌԱՋ

Ուշագրավ իրավիճակ է ստեղծվել ԱԺ նախկին նախագահ Գալուստ Սահակյանի որդու՝ Տիգրան Սահակյանի դեմ հարուցված քրեական գործով: Ինչպես հայտնի է, նրան մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա խաբեության եղանակով պետությանը պատճառել է առանձնապես խոշոր չափի վնաս, ինչպես նաեւ քաղաքացիական գործի շրջանակներում ներկայացրել է կեղծ աղացույցներ: Ի դեպ, վերջինիս հետ մեղադրյալի աթոռին են հայտնվել եւս 4 անձ:

Քրեական գործով դատարանում ուշագրավ իրավիճակ է եղել: Մասնավորապես, ԱԺ նախագահի որդու հետ դատարանում հայտնված անձանցից երկուսը կոնկրետ հարց են բարձրացրել, որը կապված է եղել իրենց խափանման միջոցի (ստորագրությամբ չհեռանալու մասին) հետ, ասել է թե՝ խափանման միջոցը նրանց խնդիրների առաջ է կանգնեցրել: Գործով մեղադրյալ Արմինե Ստեփանյանը միջնորդություն է ներկայացրել եւ հայտարարել. «Ինձ մեղադրանք է առաջադրվել, որ ես, զբաղեցնելով Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության առաջին կարգի մասնագետի պաշտոնը, միեւնույն ժամանակ հանդիսանալով 2-2040 քաղաքացիական գործով պատասխանող կողմի՝ Երեւանի քաղաքապետարանի կողմից լիազորված ներկայացուցիչ, օժանդակել եմ 29.01.2004-09.04.2004թթ. ժամանակավորապես նույն վարչության պետի լիազորություններն իրականացնող պաշտոնատար անձ Կարեն Վեկտորի Սարդարյանին, անձնական այլ շահագրգռվածությունից եւ խմբային շահերից ելնելով, իր պաշտոնեական դիրքն ծառայության շահերին հակառակ օգտագործելուն, որի հետեւանքով պետության իրավունքներին եւ օրինական շահերին պատճառվել է անզգուշությամբ ծանր հետեւանքներ առաջացրած էական վնաս: Տվյալ քրեական գործը դատարանի վարույթ է ընդունվել 11.09.2020 թվականին, որի շրջանակներում իմ կողմից 02.10.2020 թվականի միջնորդություն է ներկայացվել ակնհայտ անհիմն մեղադրանք առաջադրելու հիմքով իմ նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու եւ որպես հետեւանք ընտրված խափանման միջոցը վերացնելու մասին: Քրեական գործը դատարանի վարույթ ընդունվելուց հետո անցել է ավելի քան 1 տարի 5 ամիս, որի ընթացքում տեղի է ունեցել միայն մեկ դատաքննություն, իսկ մնացած դեպքերում դատական նիստերը հետաձգվել են, եւ դատարանի ծանրաբեռնվածությունից ելնելով՝ յուրաքանչյուր հերթ նշանակվել է երկարատեւ ընդմիջումներով: Նախաքննության մարմնի կողմից 04.08.2020թ. ինձ մեղադրանք է առաջադրվել, եւ իմ նկատմամբ կիրառվել է խափանման միջոց ստորագրությունը՝ չհեռանալու մասին: Հարկ է արձանագրել այն փաստը, որ ինչպես նախաքննության, այնպես էլ դատաքննության ընթացքում ես դրսեւորել եմ պատշաճ վարքագիծ, մասնավորապես՝ վարույթն իրականացնող նախաքննության մարմնի բանավոր կանչով մշտապես ներկայացել եմ քննության, տվել եմ ցուցմունքներ, մասնակցել եմ առերեսման, ամբողջ նախաքննության ընթացքում չի արձանագրվել գեթ մեկ դեպք, երբ ես որեւէ կերպ փորձ կատարած լինեմ խոչընդոտել քննությանը կամ թաքնվել քննությունից: Համանման վարքագիծ եմ դրսեւորել նաեւ գործի դատական քննության ընթացքում: Նման արարք չեմ կատարել եւ չեմ պատրաստվում կատարել:Բացի այդ, նախկինում երբեք դատապարտված կամ որեւէ այլ կերպ արատավորված չեմ եղել, չեմ կատարել եւ չեմ պատրաստվում կատարել Քրեական օրենսգրքով չթույլատրված որեւէ արարք: Ավելին՝ ես ունեմ մշտական բնակության վայր, ընտանիք, այդ թվում՝ անչափահաս երեխա, մասնագիտություն եւ մշտական աշխատանք: Այսպիսով, բացակայում են Քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված խափանման միջոց կիրառելու հիմքերը: Միաժամանակ դատարանի ուշադրությունն եմ հրավիրում այն հանգամանքին, որ այս քրեական գործով խափանման միջոց ընտրելիս մեղադրանք առաջադրված անձանց նկատմամբ ցուցաբերվել է խտրական վերաբերմունք, որը ինչպես իրավական հիմնավորումներից, այնպես էլ տրամաբանությունից դուրս է (իմ՝ իբրեւ որպես հանցագործությանը օժանդակողի արարքիս բնույթն ու վտանգավորության աստիճանն ավելի մեծ է, քան այն անձինը, ում իբրեւ օժանդակել եմ): Կրկին հավաստիացնում եմ, որ չեմ պատրաստվում իմ գործողություններով ինձ վերագրել գոյություն չունեցող, անգամ ենթադրություններից զուրկ արարք եւ առանց խափանման միջոցի առկայության էլ ամբողջ դատաքննության ժամանակ կդրսեւորեմ պատշաճ վարքագիծ: Վերոգրյալ իրավական եւ փաստական հանգամանքները հիմք ընդունելով ՄԻՋՆՈՐԴՈՒՄ ԵՄ հրատապության կարգով քննության նշանակել սույն միջնորդությունը եւ վերացնել իմ նկատմամբ կիրառված խափանման միջոց ստորագրությունը՝ չհեռանալու մասին: Այսօրինակ միջնորդություն է ներկայացրել մեղադրյալներից Արտյոմ Սարգսյանը եւս, եւ դատարանը բավարարել է նրանց միջնորդությունները եւ վերացրել խափանման միջոցը՝ ստորագրությամբ երկրից չհեռանալու մասին: Իսկ, ահա, ԱԺ նախկին նախագահի որդու խափանման միջոցը շարունակում է մնալ ստորագրությամբ երկրից չհեռանալու մասին: Ի դեպ, այս գործը դատարան է մտել 2020 թվականի սեպտեմբերի 9-ին, եւ շուրջ երկու տարի է, ինչ քննությունը շարունակվում է, մինչդեռ մեղադրյալները հայտնվում են բազմաթիվ խնդիրների առաջ»:

Ք. Մ.

ԼՈՒՐԵՐ

ԳՈՐԾԸ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ Է

ՀՀ քննչական կոմիտեի գործողությունների արդյունքում պարզվել են Արմավիրի մարզպետարանի քաղաքաշինության վարչության նախկին պետի կողմից պաշտոնեական լիազորությունները չարաշահելու դեպքի հանգամանքները: Նախաքննությամբ հիմնավորվել է, որ 2003-2018թթ. ընթացքում քաղաքաշինության վարչության պետի պաշտոնը զբաղեցնող հիշյալ անձը, խմբային շահերից ելնելով, իր պաշտոնեական դիրքն օգտագործել է ծառայության շահերին հակառակ:

Այսպես, վերջինս, ի պաշտոնե տեղյակ լինելով Արմավիրի մարզպետի կողմից հիմնադրված բարեգործական հիմնադրամի մասին, մեկ միասնական դիտավորությամբ քաղաքացիներին տրամադրել է հիշյալ հիմնադրամի հաշվեհամարը եւ ուղղորդել վճարումներ կատարել՝ վերջիններիս մոտ ստեղծելով տպավորություն, որ այդ վճարումներն օրինական են եւ իրականացվում են համայնքներից՝ մարզպետարանի քաղաքաշինության վարչություն ստացված հատուկ կարգավորման օբյեկտ հանդիսացող հողամասերի գործառնական նշանակության փոփոխման, վերակառուցման, կառուցման, կառուցապատման համաձայնություն տալու, ինչպես նաեւ իր իրավասության սահմաններում մարզպետարանից առարկություն չներկայացնելու համար: Արմավիրի մարզպետարանի քաղաքաշինության վարչության նախկին պետին մեղադրանք է առաջադրվել՝ 2003թ. ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով: Որպես խափանման միջոց վերջինիս նկատմամբ ընտրվել է ստորագրությունը՝ չհեռանալու մասին: Նախաքննությունն ավարտվել է, եւ քրեական գործը՝ մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել է դատարան:

ԴԱՆԱԿԱՀԱՐԵԼ Է

Ոստիկանության Հրազդանի բաժին հիվանդանոցից հաղորդում է ստացվել, որ որովայնի կտրած-ծակած վերքերով բուժօգնության է տեղափոխվել 20-ամյա երիտասարդ: Ոստիկանության Հրազդանի բաժնի եւ Ծաղկաձորի բաժանմունքի քրեական հետախույզները պարզել են, որ օգոստոսի 8-ին՝ ժամը 23.50-ի սահմաններում՝ Մեղրաձոր համայնքի 5-րդ փողոցի տներից մեկի մոտ տեղի ունեցած վիճաբանության ժամանակ, երիտասարդին դանակահարել էր 49-ամյա համագյուղացին: Նա ձերբակալվել եւ տեղափոխվել է ոստիկանության Հրազդանի բաժին: Նախապատրաստված նյութերն ուղարկվել են նախաքննական մարմին:

ԼՈՒՐԵՐ

ԿՄՆԱ ԿԱԼԱՆՔԻ ՏԱԿ

Վերաքննիչ քրեական դատարանը մերժել է ՀՀ նախկին գլխավոր դատախազ, Քննչական կոմիտեի նախկին նախագահ Աղվան Հովսեփյանին կալանքի տակ թողնելու որոշման դեմ բողոքը: Աղվան Հովսեփյանը կմնա կալանքի տակ: ՀՀ հատուկ քննչական ծառայությունում քննվող քրեական գործով ձեռք բերված բավարար ապացույցների համակցությամբ հիմնավորվել է, որ Աղվան Հովսեփյանը ստացել է առանձնապես խոշոր չափերով՝ 190.000.000 ՀՀ դրամ կաշառք եւ խարդախության եղանակով կատարել առանձնապես խոշոր չափերով՝ 800.000.000 ՀՀ դրամ գույքի հափշտակություն: Հովսեփյանին մեղադրանք է առաջադրվել նաեւ հանցավոր ճանապարհով ստացված առանձնապես խոշոր չափերով՝ընդհանուր 1.299.404.414 ՀՀ դրամ գույքը (փողերի լվացում) օրինականացնելու համար: Հաղորդագրության մեջ նաեւ ասվում էր, որ Աղվան Հովսեփյանը, 2004 թվականի մարտի 18-ից մինչեւ 2013 թվականի սեպտեմբերի 13-ը զբաղեցնելով ՀՀ գլխավոր դատախազի, իսկ 2014 թվականի հուլիսի 18-ից մինչեւ 2018 թվականի հունիսի 11-ը՝ՀՀ քննչական կոմիտեի նախագահի պաշտոնները, հիշյալ ժամանակահատվածում փաստացի մասնակցել է ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող մի շարք ՍՊ ընկերությունների կառավարմանը: Վերը նշված հանցավոր արարքների կատարման համար Աղվան Հովսեփյանին մեղադրանք է առաջադրվել՝ՀՀ քրեական օրենսգրքի 310-րդ հոդվածով, 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով, 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով եւ 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (3 դրվագ): Աղվան Հովսեփյանը ձերբակալվել է 2021 թվականի սեպտեմբերի 7-ին, այնուհետեւ նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

ԿԻԲԵՐ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Արցախի ոստիկանության տնտեսական եւ կոռուպցիոն հանցագործությունների դեմ պայքարի վարչություն օգոստոսի 8-ին ստացվել է Ստեփանակերտ քաղաքի բնակիչ Գ.Ա.-ի (ծնված 1998թ.) դիմումը՝ համակարգչային տեխնիկայի միջամտությամբ կատարված հանցագործության վերաբերյալ: Արցախի ներքին գործերի նախարարության փոխանցմամբ՝ ըստ դիմողի՝ ս.թ. օգոստոսի 7-ին անհայտ անձը համացանցով, համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ «Հայբիզնես-Բանկ» ՓԲ ընկերությունում բացված քարտային հաշվից, առանց իր իմացության, ընդհանուր 347.822 ՀՀ դրամ գումար է փոխանցել իր անձնական տվյալներով նույնականացված «Adjarabet.am» բուքմեյքերական ընկերության խաղային հաշվին եւ նույն խաղային հաշվից կանխիկացնելու եղանակով հափշտակել է այն: Գ.Ա.-ին պատճառվել է զգալի չափի գույքային վնաս: Ստուգմամբ զբաղվում է ոստիկանության տնտեսական եւ կոռուպցիոն հանցագործությունների դեմ պայքարի վարչությունը:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ օգոստոսի 8-ից 9-ը Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը բացահայտել է հանցագործության 64 դեպք, որոնցից 4-ը՝ նախկինում կատարված:*

ՆԱԽԿԻՆ ՄԻՊ-ԻՑ

ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ՎՏԱՆԳԻ ՏԱԿ

ՀՀ մարդու իրավունքների նախկին պաշտպան Արման Թաթոյանը սոցցանցի իր էջում գրել է. «Աղավնոյում իմ վերջին այցի ժամանակ փաստեր էինք հավաքել, որ ադրբեջանական զինծառայողները կենդանիներ (նաեւ խոշոր եղջերավոր) են մորթում ու ոչ պետքական օրգանները կամ սատկած կենդանիների օրգանները գցում այն ջրի մեջ, որից օգտվում են գյուղի բնակիչները: Դրա պատճառով ջրում հայտնվում էին առնետներ, արձանագրվել էին ջրից զանգվածային թունավորման դեպքեր, այդ թվում՝ թունավորվել էին երեխաներ ու տարեցներ: Այս մասին նշել էին գյուղի բոլոր բնակիչները: Մարդկանց տներն ադրբեջանական ամբողջական դիտարկման ներքո էին: Երբ գյուղատնտեսական աշխատանքների համար մարդիկ փորձում էին մոտենալ իրենց հողատարածքներին (անգամ մի քանի հարյուր մետր հեռավորության վրա), ադրբեջանական զինված ուժերը կրակում էին: Մարդիկ հնարավորություն չունեին վաստակելու ընտանիքի եկամուտը:

Ադրբեջանական իշխանությունները վարել ու հիմա էլ վարում են խաղաղ բնակիչներին ահաբեկելու, հուսահատության մթնոլորտ առաջացնելու նպատակային քաղաքականություն: Ադրբեջանական հանցավոր արարքները թե՛ Հայաստանի, թե՛ Արցախի նկատմամբ բնույթով նույնն են՝ Արցախում ագրեսիվ դրսեւորումներով:

Բա ցեղասպանությունն էլ ինչպե՞ս է լինում: Ու այսքան ժամանակ ի՞նչ է Հայաստանն արել այս փաստերն օգտագործելու, միջազգային մեխանիզմներ աշխատեցնելու համար:

ՀՀ իշխանություններն իրենց համար ներքին քաղաքական անվտանգ ձեւակերպում են սովորել՝ «Ադրբեջանն իրականացնում է էթնիկ զտումներ»: Հիմքում չեն դնում փաստեր, չեն կապում դա ցեղասպան քաղաքականության ու ինքնորոշման իրավունքի հետ, այլ օգտագործում են միայն այս ընդհանուր ձեւակերպումը, այն էլ՝ քաղաքական կոնտեքստներում ու գլխավորապես իրենց ներքին քաղաքական քարոզի համար: Բայց այս մոտեցումն Ադրբեջանի համար ոչ միայն մեծ խնդիրներ կամ, առհասարակ, խնդիրներ չի ստեղծում, այլ ավելի է ամրապնդում նրանց դիրքերը: Բերձորի եւ Աղավնոյի հանձնումն Ադրբեջանին Հայաստանի իշխանությունների կործանարար քաղաքականության հերթական դրսեւորումն է:

Այս քայլը լրջագույն վտանգի տակ է դնում Հայաստանը, մասնավորապես՝ Սյունիքը, հատկապես այն ֆոնին, որ ՀՀ իշխանությունները, վախենալով իրենց նկատմամբ քաղաքական դժգոհությունից եւ սեփական պաշտոնները կորցնելուց (սա իրենց մղձավանջն է, եւ պաշտոններն ավելին են, քան երկրի անվտանգությունը), թաքցնում կամ արդարացնում են ադրբեջանական հանցավոր արարքները: Առանց այն էլ ադրբեջանական զինված ծառայողների հանցավոր ներկայությունը ՀՀ գյուղերի հարեւանությամբ ու ճանապարհներին անհնարինության է վերածել մարդկանց կյանքը: Այսպիսի մանդատ Հայաստանի իշխանությունները ՀՀ քաղաքացիներից չեն ստացել»:

ՄԱՐԶ

ՊԱՀԱԿՆԵՐԸ ԴԱՏԻ ԵՆ ՏՎԵԼ

Իջեւան խոշոր համայնքի սահմանամերձ Վազաշեն գյուղի բնակիչներ Սուրիկ Ղազարյանի, Գրիգոր Սարհասյանի, Հովիկ Գյոզալյանի եւ Սամվել Ճոկլինյանի ներկայացուցիչ Ա. Ղազարյանը գումար բռնագանձելու պահանջով ընդդեմ «Պոլիմետ կորպորացիա հայ-կանադական համատեղ ձեռնարկություն» ՍՊԸ-ի հայցադիմում է ներկայացրել Տավուշի մարզի առաջին ատյանի դատարան: Այդ դատարանի՝ 2022 թվականի մայիսի 4-ի որոշմամբ՝ հայցադիմումն ընդունվել է վարույթ: Հուլիսի 6-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր Աշոտ Ջավախյանը որոշել է նշված հայցով 2022թ. օգոստոսի 16-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի Իջեւան քաղաքի նստավայրում նշանակել նախնական դատական նիստ: Նախկինում Վազաշեն համայնքի ղեկավար, ներկայումս Վազաշեն բնակավայրի վարչական ղեկավար Լորիկ Բաղիրյանը հայտնեց, որ դատարան հայցադիմում ներկայացրած 4 անձինք Վազաշեն գյուղի անտառում գտնվող բազմամետաղ հանքավայրում պահակություն են արել, որի դիմաց «Պոլիմետ կորպորացիա հայ-կանադական համատեղ ձեռնարկություն» ՍՊԸ-ն նրանց աշխատավարձի պարտքեր ունի, այդ գումարները ստանալու համար նշված անձինք դիմել են դատարան: Վազաշենի սահմանամերձ անտառում գտնվող հանքավայրում ներկայումս աշխատանքներ չեն իրականացվում:

2012-2017թթ.-ին «Պոլիմետ կորպորացիա հայ-կանադական համատեղ ձեռնարկություն» ՍՊԸ-ն Վազաշենի ոսկու հանքավայրի տարածքում երկրաբանական ուսումնասիրություններ կատարելու արտոնագիր է ունեցել: Այդ ընկերության ստեղծման գործում մեծ ներդրում է ունեցել ծնունդով գյումրեցի Վահագն Ժայռենց Գայայանը, որը 1982թ. ընտանիքով տեղափոխվել է Կանադա: Վազաշենի հանքավայրի ուսումնասիրությունների համար 2012թ. սեպտեմբերի 10-ին Հայաստանում հիմնադրվել է «Պոլիմետ կորպորացիա» հայ-կանադական ՀՁ-ն, որպես բաժնետեր եւ հիմնական ներդրող ներգրավվել է Վ. Ժ. Գայայանի ներկայացրած կանադական «Ասեսմենթ սիսթեմս կորպորացիա» ՍՊԸ-ն՝80 % բաժնեմասով, եւ հայաստանյան «Ստիմուլ» ՍՊԸ-ն՝ 20% մասնակցությամբ: Համաձայն ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի տվյալների՝ հայաստանյան «Ստիմուլ» ՍՊԸ-ի բաժնեմասը հավասարապես կիսել են Իշխան Հովհաննիսյանի որդին՝ Արթուր Հովհաննիսյանը, եւ այժմ լուսահոգի Աիարոն Ադիբեկյանի դուստրը՝ ադրբեջանագետ Արմինե Ադիբեկյանը, կանադական «Ասեսմենթ սիսթեմս կորպորացիա»-ի ներկայացուցիչ է նշանակվել Աիարոն Ադիբեկյանը: Հետագայում բաժնետերերի մեջ հակասություններ են ծագել, այդ կապակցությամբ դատական հայցեր են ներկայացվել: Դրանից հետո՝ 2019թ. սկզբին, Վազաշենում երկրաբանահետախուզական աշխատանքներ իրականացնելու նպատակով հայտ է ներկայացրել նոր ընկերություն՝ «Էյ Յու գրուպ» ՍՊԸ-ն, որի հիմնադիրը նույն Վահագն Ժայռենց Գայայանն է: 2019թ. մայիսին Բնապահպանության նախարարությունը բացասական եզրակացություն է տվել այդ ընկերության հայտին՝հիմնավորելով, որ հայցվող տարածքի մեծ մասը գտնվում է «Հայանտառ» ՊՈԱԿ-ի հողային հաշվեկշռում, այնտեղ տարբեր ծառատեսակներից կազմված ծառուտներ են:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԼՈՒՐԵՐ

ՔԻՉ ԱՄՈՒՍՆԱՆՈՒՄ ԵՎ ՇԱՏ՝ ԱՄՈՒՍՆԱԼՈՒԾՎՈՒՄ ԵՆ

Հայաստանում քիչ ամուսնանում են, շատ՝ ամուսնալուծվում: ArmLur.am-ը տեղեկացավ, որ այս տարվա 6 ամիսներին գրանցվել է ամուսնության 7 հազար 926 դեպք: Նախորդ տարի այս թիվը կազմել է 8130: Մեկ տարվա ընթացքում 204-ով պակասել են ամուսնության դեպքերը: Պետք է արձանագրենք, որ ավելացել է ամուսնալուծվող զույգերի թիվը: Պաշտոնապես մեր հանրապետությունում այս տարվա 6 ամիսներին ամուսնալուծության 2207 դեպք է գրանցվել, մինչդեռ նախորդ տարվա հունվար-հունիսին ամուսնալուծվել է 2002 մարդ:

ArmLur.am-ը փոքրիկ ուսումնասիրության արդյունքում պարզեց, թե որ մարզում են ամենաշատն ամուսնալուծվում: Պարզվեց, որ ամենաշատ ամուսնալուծությունները գրանցվել են Երեւանում. դրանց թիվը կազմում է 1099: Ցանկում հաջորդը Լոռու մարզն է, որտեղ ամուսնալուծության դեպքերի քանակը կազմել է 166: Սրան զուգահեռ նկատենք, որ Լոռիում ամուսնացել է 609 մարդ:

Արմավիրում ամուսնալուծվել է 138, ամուսնացել՝703 մարդ, Շիրակում ամուսնալուծվել է 137 մարդ, ամուսնացել՝636-ը: Նշենք, որ Արարատի մարզն ամուսնալուծությունների թվով եւս առաջատար դիրքերում է. այս մարզում ամուսնալուծվել է 157 մարդ, իսկ ամուսնացել՝ 647-ը: ArmLur.am-ը տեղեկացավ, որ Տավուշի մարզում ամուսնալուծվել է 65 մարդ, իսկ ամուսնացել՝ 276 մարդ, Սյունիքում ամուսնալուծության 88 դեպք է գրանցվել, իսկ ամուսնության դեպքերը 352 են կազմել: Գեղարքունիքում 91 մարդ է ամուսնալուծվել, 631 մարդ՝ամուսնացել:

Մասնագետները կարծում են, որ զույգերի ամուսնալուծության պատճառները սոցիալական եւ ֆինանսական խնդիրներն են: Օրինակ՝ ՀՀ որոշ մարզերում սոցիալական ապահովվածության մակարդակը բավականին ցածր է, ընտանիքը չի կարողանում դիմանալ, եւ տարաձայնությունները, անհամերաշխությունը հանգեցնում են հիասթափության եւ ամուսնալուծության: Մասնագետների մի շրջանակ էլ գտնում է, որ ընտանեկան բռնությունների պատճառով է, որ ավելանում են ամուսնալուծությունները:

Իսկ, ահա, եվրոպական երկրներում ամուսնալուծությունների հիմնական պատճառը անհավատարմությունն է: Մասնագետների խոսքերով՝ մեր երկրում կնոջ դավաճանության դեպքերը շատ քիչ են: Հայաստանում հիմնականում տղամարդիկ հավատարիմ չեն:

ՍՅՈՒՆԷ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՄՏԱՀՈԳՎԱԾ Է

ԱՄՆ Կոնգրեսի ներկայացուցիչների պալատի անդամ Լինդա Սանչեսը հայտարարություն է տարածել՝ դատապարտելով Ադրբեջանի ագրեսիվ գործողություններն Արցախի ժողովրդի դեմ: «Մտահոգված եմ այն հաղորդագրություններով, որ Ադրբեջանը խախտել է հրադադարը եւ ձեռնարկել է չհրահրված հարձակում Արցախի ժողովրդի դեմ: Ես վճռականորեն դատապարտում եմ Ադրբեջանի ագրեսիան եւ միանում միջազգային հանրությանը՝ կոչ անելով անհապաղ դադարեցնել ռազմական գործողությունները տարածաշրջանում»,- «Թվիթեր»-ի իր էջում նշել է Լինդա Սանչեսը:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 15 ՃՏՊ. 25 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՃԱՆՈՒՑՈՒՄ

«Բի էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «Ակսոն» ԱՀ Բորսայի հարթակում.

1. Իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը.

- Լոռու մարզ, համայնք Ալավերդի ք., Երեւանյան խճուղի, 18/1 հասցեում գտնվող 453.71 ք.մ. ավտոտեխսպասարկման եւ հասարակական օբյեկտ եւ 0,0364 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 36400000 ՀՀ դրամ:
- Երեւան, Նոր-Նորք, Նոր-Նորքի 7-րդ միկրոշրջան, 37 շենք, թիվ 6 հասցեում գտնվող 47 ք.մ. մակերեսով բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 20100000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 26.08.2022թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 26.09.2022թ.-ին:

2. Շարունակելու է «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտի բաց աճուրդը.

- Տավուշի մարզ, համայնք Դիլիջան ք., Գետափնյա փողոց, 74 շենք, 18 հասցեում գտնվող 91.7 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 20880000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը հոլանդական եղանակով՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում 26.08.2022թ.-ին, ժ. 12:00-ին, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝ 26.09.2022թ.-ին:

Լոտերի նկատմամբ սահմանափակումները՝ գույքերը գրավադրված են:

Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին) կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.akson.am կայքեր:

ՑՈՒՑԱԿԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

ԲՆԱԿԱՐԱՆ ԳՆԵԼՈՒ ՍԵՐՏԻՖԻԿԱՏ ԿՍՏԱՆԱՆ

Արցախի Բերձոր, Աղավնո եւ Ներքին Սուս համայնքների բնակչությանը տարհանելու նպատակով ներկայում ցուցակագրման գործընթաց է իրականացվում՝ պարզելու, թե ովքեր են ցանկանում հաստատվել Արցախում, ովքեր՝ Հայաստանի Հանրապետությունում:

Այս մասին «Արմենպրես»-ի թղթակցի հետ զրույցում ասաց Արցախի Հանրապետության տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Հայկ Խանումյանը՝ նշելով, որ երեք համայնքներում, ընդհանուր առմամբ, մոտ 100 ընտանիք է բնակվում:

«Մոտ օրերս համայնքապետերը կներկայացնեն համապատասխան ցուցակները, եւ, ըստ այդմ, կլուծվի Արցախ տեղափոխվող ընտանիքների բնակապահովման խնդիրը: Այն ընտանիքները, որոնք կտեղափոխվեն Հայաստանի Հանրապետություն, կստանան բնակարան գնելու սերտիֆիկատ, իսկ մինչ այդ՝ բնակարանի վարձավճարի փոխհատուցում: Նախնական տվյալներով՝ Արցախում հաստատվելու ցանկություն է հայտնել նշված համայնքների բնակչության մոտ 25-30 տոկոսը»,- մանրամասնեց նախարարը:

Գերատեսչության ղեկավարն ընդգծեց, որ արդեն հստակ է՝ որտեղ կտեղավորվեն Բերձորից, Աղավնոյից եւ Ներքին Սուսից տարհանվող ընտանիքներից Արցախում բնակվելու ցանկություն հայտնողները, որոնց պետությունն ապահովվելու է բնակարանով: Խոսելով տարհանման գործընթացում առկա խնդիրներից՝ Հայկ Խանումյանը հայտնեց, որ տեղափոխման հարցերը կլուծվեն միջազգային տարբեր կազմակերպությունների, անհրաժեշտության դեպքում՝ նաեւ պետության օգնությամբ:

«Այս պահին մեր գործընկերների հետ բանակցում ենք, որպեսզի օգնեն գործընթացի կազմակերպման հարցում: Քննարկվում են տեխնիկական մանրամասները՝ ինչ ձեւով փոխանցվի գումարը, եւ այլն»,- ասաց մեր զրուցակիցը՝ հավաստիացնելով, որ տեղափոխման հետ կապված խնդիրներ չկան:

Նրա հավաստմամբ՝ մինչեւ օգոստոսի 25-ը հնարավոր է արագ եւ ժամանակին կազմակերպել տարհանման գործընթացը: Այս ընթացքում Արցախի Հանրապետության ԿԳՄՍ նախարարությունն էլ իրականացնում է պատմամշակութային ժառանգության դուրսբերումը:

Անդրադառնալով սոցցանցերում առկա որոշ քննարկումներին, ըստ որոնց՝ Բերձորի, Աղավնոյի եւ Ներքին Սուսի բնակչությանն արգելվել է հրդեհել տները՝ նախարար Խանումյանը հիշեցրեց Շահումյանի շրջանի Չարեքտար համայնքի օրինակը, երբ բնակիչները հրդեհել էին տները, ինչից հետո պարզվել էր, որ բնակավայրը մնալու է Արցախի վերահսկողության ներքո:

«Ես դեմ եմ տները վառելուն: Արդեն մի անգամ Չարեքտարը վառել են, թյուրիմացաբար ասեմ, թե միտումնավոր, եւ այսօր 100 միլիոնավոր դրամներ ենք ծախսում այդ գյուղը վերականգնելու համար: Ընդամենը մեկուկես տարի է անցել, ինչ Աղանուս համայնքի տարածքը հանձնվեց, բայց այսօր այդ համայնքի տարածքը վերադառնում է միջանցք, դուրս է գալու Ադրբեջանի վերահսկողությունից, բայց այնտեղ ամեն ինչ թալանված ու այրված է՝ սկսած առաջին պատերազմի տարիներից մինչեւ 2020 թվական: Մեղվաձոր, Հունանավան, Մելիքաշեն, Մարաթուկ բնակավայրերի մասին է խոսքը: Եթե բնակֆոնդը թողնեինք այդ միջանցքում, այսօր այդտեղ հանգիստ կարող էինք բնակեցում անել, բայց այսօր այնտեղ միայն պատեր են վառված ու ավերակներ»,-ասաց Խանումյանը՝ նշելով, որ Աղավնոն շատ մոտ է գտնվում Արցախը ՀՀ-ին կապող նոր երթուղով նախատեսված միջանցքին, եւ հայտնի չէ, թե մեկուկես, երկու տարի հետո ինչպես կփոխվի իրավիճակը:

«Չէի ցանկանա, որ ամեն ինչ մեր օգտին ընթանալու դեպքում Աղավնո վերադառնալուց հետո նույն կերպ այրված ու սեւացած պատեր տեսնեինք, հետեւաբար կտրուկ դեմ եմ որեւէ բան այրելուն, թալանելուն, քանդելուն»,- շեշտեց Արցախի ՏԿԵ նախարարը: Պատասխանելով Արցախ-Հայաստան այլընտրանքային ճանապարհով երթեւեկությունը կազմակերպելու առանձնահատկությունների եւ հարեւանությամբ կառուցվող նոր ենթակառուցվածքների վերաբերյալ հարցին՝ նախարարը մանրամասնեց, որ նոր երթուղին սկսվում է Տասը Վերստ բնակավայրից, ապա անցնում Մեծ Շեն, Հին Շեն եւ Քաշաթաղի շրջանի Աղանուս համայնքի վարչական տարածքով եւ հասնում մինչեւ ՀՀ սահման:

«Դեռեւս կառուցված չէ դեպի Կոռնիձոր 11-կիլոմետրանոց ճանապարհահատվածը: Մինչեւ այդ ժամանակավորապես կանցնենք 4-կիլոմետրանոց գրունտային փոքր հատվածով, որը միանում է գործող մայրուղուն՝ Աղավնոյի հենց վերեւում»,-ասաց Հայկ Խանումյանը՝ հավելելով, որ այլընտրանքային ճանապարհը կգործի միջանցքի տրամաբանությամբ:

Նախարարի հաղորդմամբ՝ ՀՀ սահմանից Կոռնիձոր ընկած ճանապարհահատվածը նախատեսվում է կառուցել մոտ 250 օրում: Այլընտրանքային ճանապարհի անվտանգությունը գործելու է ներկայում Բերձոր-Աղավնոյով անցնող միջանցքի սկզբունքով. նոր երթուղու 5-կիլոմետրանոց հատվածում կտեղակայվի ռուսական խաղաղապահ զորախումբը:

Ինչ վերաբերում է այլընտրանքային ճանապարհի երկայնքով Արցախը սնուցող նոր ենթակառուցվածքների, մասնավորապես՝ կապի եւ էլեկտրամատակարարման բարձրավոլտ գծերի անցկացմանը, Հայկ Խանումյանը նշել է, որ աշխատանքներն արդեն ընթացքում են, որը նախատեսում են ավարտել սեղմ ժամկետներում:

ԼՈՒՐԵՐ

ԾԱՎԱԼՆԵՐՆ ԱՃԵԼ ԵՆ

Հայաստանում 2022թ. առաջին կիսամյակում բեռնափոխադրումների ծավալը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել է 11.2 տոկոսով: Երկաթուղային բեռնափոխադրումները հիշյալ ժամանակահատվածում ավելացել են 1 տոկոսով, ավտոմոբիլայինը՝ 12.9 տոկոսով, օդայինը՝ 5.3 տոկոսով (ցուցանիշում ներառված են նաեւ այլ երկրների ավիաընկերությունների ինքնաթիռներով իրականացված բեռնափոխադրումները), մայրուղային խողովակաշարայինը՝ 18.4 տոկոսով: Ընդհանուր առմամբ, բոլոր տեսակի տրանսպորտի տեսակներով կատարվել է 8 միլիոն 332.6 հազար տոննա բեռնափոխադրում:

Այս տարվա առաջին կիսամյակում ընդհանուր օգտագործման տրանսպորտի բոլոր տեսակներով ուղեւորափոխադրումն աճել է 40.4 տոկոսով. տեղափոխվել է 71 միլիոն 030.5 հազար մարդ: Երկաթուղային տրանսպորտով ուղեւորափոխադրումն աճել է 22.5 տոկոսով, ավտոմոբիլային տրանսպորտով՝ 43.9 տոկոսով, օդային տրանսպորտով, այդ թվում՝ այլ երկրների ավիաընկերությունների ինքնաթիռներով իրականացված ուղեւորափոխադրումներն աճել են 75.6 տոկոսով, էկեկտրատրանսպորտով ուղեւորափոխադրումները՝ 25.4 տոկոսով: Ավտոմոբիլային տրանսպորտով ուղեւորափոխադրումների ցուցանիշում, հատկանշական է, որ հաշվարկված է միայն իրավաբանական անձանց կողմից մատուցած տաքսի ծառայությունների ծավալը, որը, ի դեպ, արձանագրել է 23.4 տոկոսի անկում՝ նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ: Բեռնափոխադրումների եւ ուղեւորափոխադրումների ծավալների երկնիշ աճը վկայում է, որ ոլորտները թոթափում են COVID-19 համավարակի հասցրած վնասները, փորձում են վերականգնվել:

ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Զինվորական ծառայության առօրյայից համացանց լուսանկարներ ներբեռնած զինծառայողները ենթարկվել են կարգապահական պատասխանատվության:

«Հայաստանի Հանրապետության ՊՆ ռազմական ոստիկանության աշխատակիցների ձեռնարկած գործողությունների արդյունքում հայտնաբերվել, ՌՈ բաժիններ են տեղափոխվել Հայաստանի Հանրապետության ԶՈՒ մի շարք պարտադիր ժամկետային եւ պայմանագրային զինծառայողներ, որոնք, խախտելով Հայաստանի Հանրապետության ՊՆ N հրամանը, օգտագործել են սմարթ հեռախոսներ, զինվորական ծառայության առօրյայից լուսանկարներ են ներբեռնել համացանց: Զինծառայողները ենթարկվել են կարգապահական պատասխանատվության»,- ասված է հաղորդագրությունում:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ՄՐՑՈՒՅԹ

ՍՊԻՏԱԿՑԻ ՀԱՅԿՈՅԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ

Սեպտեմբերի 21-ի անկախության տոնակատարությունների կազմակերպման աշխատանքները շարունակում են հետաքրքրություն առաջացնել ոչ թե անկախության բովանդակության, այլ կազմակերպչական հարցերի իմաստով: Երեւանի Հանրապետության հրապարակում անկախության օրով կհնչեն հայրենասիրական երգեր ռաբիս կատարողի շուրթերից: Իսկ ինչպե՞ս է դատահել սա:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ անկախության 31-րդ տարեդարձի տոնակատարության միջոցառմանը Հանրապետության հրապարակում երգիչ Հայկ Ղեւոնդյանի՝ Սպիտակցի Հայկոյի ելույթ ունենալու փաստը մեծ աժիոտաժ է առաջացրել ոչ միայն հանրության, այլեւ իշխանական վերնախավի եւ պետական մարմինների շրջանում: ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հանկարծակի որոշումը գլխիվայր է շրջել Կառավարության նախնական ծրագիրը, քանի որ նախապես հայտարարված մրցույցը, ըստ երեւույթին, այդպես էլ չի կայացել, եւ առանց մրցույթի հանկարծակի որոշվել է, որ պետք է Սպիտակցի Հայկոն երգի անկախության 31-ամյակի միջոցառմանը: ArmLur.am-ը ՀՀ կառավարությունից գրավոր պարզաբանումներ էր պահանջել, թե սեպտեմբերի 21-ին՝ ՀՀ անկախության տոնի առթիվ կազմակերպվող համերգին ինչ սկզբունքով է ընտրվել միակ երգիչ Հայկ Ղեւոնդյանի թեկնածությունը: Արդյոք այլընտրանքային տարբերակ քննարկվե՞լ է, թե՞ ոչ: Եթե այո, ապա ո՞վ կամ ովքե՞ր են եղել: Եւ ամենակարեւորը՝ նախապես հայտարարված մրցույթը ինչո՞ւ չի կայացել: Ի պատասխան՝ գործադիրը հայտնել է. «ՀՀ անկախության հռչակման տարեդարձին նվիրված միջոցառումների կազմակերպման հետ կապված՝ ծառայությունների ձեռբերման նպատակով վարչապետի աշխատակազմի կողմից կազմակերպվել է ՀՀ-ՎԱ-ԵՄԾՁԲ-22/1 ծածկագրով երկփուլ մրցույթ: Մրցույթի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը (այդ թվում՝ գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրությունները) հրապարակվել է գնումների պաշտոնական տեղեկարգում՝ գնումների

մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝21.07.22 h նիստին կայացրած որոշմամբ՝ ՀՀՎԱ-ԵՄԾՁԲ-22/1 ծածկագրով երկու փուլով մրցույթը հայտարարվել է չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը: Այսինքն՝ չի եղել մասնակից, որը կհամապատասխանի մրցույթի պայմաններին: Ընթացակագի շրջանակներում պատվիրատուի կողմից ձեւավորվել է ՀՀ մի շարք գերատեսչությունների ներկայացուցիչներից կազմված մասագիտական խումբ, որի կողմից մշակվել եւ ներկայացվել է ձեռք բերվող ծառայության բնութագիրը»: Այսինքն՝ մրցույթը հայտարարվել է, համարվել՝չկայացած, հետո ինչ որ գերատեսչություններ ծանոթբարեկամով որոշել են, որ պետք է Սպիտակցի Հայկոն ելույթ ունենա, ընթացքում էլ Հայկական պետական սիմֆոնիկ նվագախումբը պետք է ելույթ ունենա:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի գլխավոր դիրիժոր Սերգեյ Սմբատյանը իր անհամաձայնությունն է հայտնել այս սցենարի մասով: Մենք զրուցեցինք նաեւ Պետական սիմֆոնիկ նվագախմբի գլխավոր դիրիժորի հետ: ArmLur.am-ի հետ զրույցում Սերգեյ Սմբատյանն ասաց, որ նոր է վերադարձել Հայաստան, սեպտեմբերի 21-ին էլ երկրում չի լինելու, հետեւաբար չի կարող ասել՝ սիմֆոնիկն այդ օրը ելույթ կունենա, թե ոչ: «Ինձ հետ նման քննարկում չի եղել, եւ ես վրդովմունք չեմ հայտնել, բացի դա, չեմ կարծում, որ հիմա մարդկանց կարծիքը կարող է ինչ-որ բան փոխել: Այստեղ ավելի շատ անձի հարցը չէ, ես՝ որպես ակադեմիական ոճի երաժիշտ, միշտ պատկերացնում եմ, որ բոլոր երաժշտական ուղղությունները կարող են իրար օգնել: Ես կատեգորիկ դասակարգումներին դեմ եմ: Ամեն դեպքում, եթե ասում են, որ պետք է լինի նաեւ սիմֆոնիկ նվագախումբը, արդեն արտասովոր երեւույթ է, եւ բովանդակային հստակ չեմ կարող ասել՝ ինչ է լինելու, կարող է բովանդակային ինչ-որ բան են պատրաստում, որը որ կլինի կրեատիվ, նոր ասելիք, նոր խոսք»,- մեզ հետ զրույցում նշեց Սերգեյ Սմբատյանը: Գործադիրից հետաքրքրվել էինք նաեւ, թե որքան գումար է նախատեսվել ծախսել այդ օրվա տոնական միջոցառումների համար (խնդրել ենք տրամադրել բացվածքը, թե ծառայության համար որքան գումար է տրամադվելու), բացի այդ, հստակ պարաբանել, թե համերգն անցկացնելու համար ֆինանսական հոսքերը միայն պետբյուջեից են լինելու արդյոք, թե այլ հովանավորներ կան: Մեր հարցադրումներին գործադիր մարմնից պատասխանել են. «Մրցույթը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներին համապատասխան (մինչեւ ֆինանսական միջոցներ նախատեսելը, նույն օրենքով սահմանված կարգով, կարող է կնքվել պայմանագիրը՝պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոնցեր նախատեսվելու դեպքում), իսկ միջոցառումների կազմակերպման հետ կապված ծառայությունների ձեռք բերման համար կանխատեսվող ֆինանսական հատկացումների չափը կազմել է 600 միլիոն դրամ»: Այսինքն՝ չեն մանրամասնել, թե մոտավորապես 1 եւ կես մլն ԱՄՆ դոլարը ինչի վրա է ծախսվելու սեպտեմբերի 21-ի միջոցառումը կազմակերպելու համար: Հավելենք, որ, ArmLur.am-ի տեղեկություններով, համերգը հանձն է առել կազմակերպել «Ֆակտորի փրոդաքշն»-ը, որի հիմնադիր տնօրենը հանդիսանում է Ռուդիկ Տերգալստյանը, որը, ըստ շրջանառվող լուրերի, սերտ կապեր ունի նաեւ այս իշխանությունների հետ: Առաջիկայում կփորձենք այնուամենայնիվ ստանալ պարզաբանումներ, թե ինչպես ծախսվեց 1.5 մլն ԱՄՆ դոլարը մեկ երեկոյի համար, եւ ով ինչ գերշահույթներ ստացավ:

ԼՈՒՐԵՐ

ՀԱՂԹԵՑ

Հնդկաստանի Չենայ քաղաքում անցկացվող շախմատի համաշխարհային օլիմպիադայի վերջին տուրում Հայաստանի հավաքականը 2,5:1,5 հաշվով պարտության մատնեց Իսպանիայի թիմին եւ 19 միավորով ընթացիկ առաջին տեղում է: Առաջին համար Գաբարիել Սարգսյանը սպիտակ ֆիգուրներով մրցեց Ալեքսեյ Շիրովի հետ եւ հաղթանակի հասավ 49-րդ քայլին: Մանուել Պետրոսյանը ոչ-ոքի խաղաց Դավիդ Անտոն Գուիխարոյի, Ռոբերտ Հովհաննիսյանը՝Խայմե Սանտոս Լատասայի հետ: Հրանտ Մելքումյանը ոչ-ոքի խաղաց Ֆրանսիսկո Վալիեխո Պոնսի հետ: Նախորդ 4 տուրերում Գաբրիել Սարգսյանը հաղթել էր ամերիկացի Ֆաբիանո Կարուանային, հնդիկ Պենտալա Հարիկրիշնային, ադրբեջանցի Շահրիյար Մամեդյարովին, ոչ-ոքի խաղացել ուզբեկ Նոդիրբեկ Աբդուսատորովին:

ՊԱՏՐԱՍՏ Է ՏԵՂԱՓՈԽՎԵԼ

Իսպանիայի փոխչեմպիոն «Բարսելոնայի» հարձակվող Պիեր-Էմերիկ Օբամեյանգը պատրաստ է տեղափոխվել Լոնդոնի «Չելսի»: Լոնդոնյան ակումբը հետաքրքրված է գաբոնցի ֆուտբոլիստի ծառայություններով: 33-ամյա ֆուտբոլիստը այս տարվա հունվարին է Լոնդոնի «Արսենալից» տեղափոխվել կատալոնական ակումբ՝ 23 խաղում խփելով 13 գոլ, կատարելով 1 գոլային փոխանցում: Նրա պայմանագիրը նախատեսված է մինչեւ 2025թ. հունիս: Transfermarkt-ը Օբամեյանգի տրանսֆերային արժեքը գնահատում է 15 միլիոն եվրո:

ԽՈՍԵԼ Է ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԻՑ

Ամերիկացի դերասան Էշթոն Քաթչերը National Geographic շոուի եթերում առաջին անգամ պատմել է իր աուտոիմուն հիվանդության մասին, որից մի հատված հրապարակված է YouTube-ում: «Երկու տարի առաջ ինձ մոտ առկա էր վասկուլիտի շատ տարօրինակ, հազվագյուտ տեսակ, որը խաթարեց իմ տեսողությունը, լսողությունը, թուլացրեց իմ ամբողջ շարժողական ապարատը», - խոստովանել է Քաթչերը: Վասկուլիտը պաթոլոգիա է, որն ազդում է խոշոր, միջին եւ փոքր անոթների վրա: Այն բնութագրվում է զարկերակների, երակների, փոքր մազանոթների պատերի բորբոքումով: «Դուք դա չեք գիտակցում, քանի դեռ այն չի անհետանում: Մինչեւ դուք չեք ասում. «Ես չգիտեմ՝ երբեւէ կկարողանամ արդյոք նորից տեսնել, չգիտեմ՝ երբեւէ կկարողանամ արդյոք նորից լսել, չգիտեմ՝երբեւէ կկարողանամ արդյոք կրկին քայլել»: Բախտս բերել է, որ ողջ եմ»,- նշել է Էշթոնը:

200–ՐԴ ՀԱՂԹԱՆԱԿԸ

Ռուսաստանցի Կարեն Խաչանովը 200-րդ հաղթանակն է տարել Պրոֆեսիոնալ թենիսիստների ասոցիացիայի (ATP) մրցաշարերում, որոնցում անցկացրել է 354 հանդիպում: 26-ամյա հայ թենիսիստը Կանադայի Մոնրեալ քաղաքում անցկացվող Masters մրցաշարի մեկնարկում պարտության էր մատնել արգենտինացի Ֆրանսիսկո Սերունդոլոյին: Կարեն Խաչանովը չորս տիտղոս է նվաճել ATP շարքի մրցաշարերում, այդ թվում՝ 2018թ. Փարիզի Masters մրցաշարում:

ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ ՀՈՒՍԻԿ ԱՐԱՅԻ ԳԻՐՔԸ

Ժամանակակից հայ գրող Հուսիկ Արայի «Կորած սերունդ»-ը դրվել է ընթերցողի սեղանին: Գիրքն ամփոփում է Հուսիկ Արայի՝ 1988-2021 թթ. գրված բանաստեղծություններն ու պոեմները՝ թեմատիկ ընտրությամբ, որն ազգային զարթոնքի, արցախյան ազատամարտի, վերակերտած խորհրդանիշների եւ մեր ոգու բանաստեղծական անդրադարձն է: Ժողովածուն կազմվել է ՀՀ անկախության 30-ամյակի առիթով: Այն լույս է ընծայել «Անտարես»-ը: Խմբագիրն է Արմենիկ Նիկողոսյանը: Գրքի ստեղծմանն աջակցել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը: Գիրքը նվիրված է ականավոր պատմաբան, հայագետ Արտակ Մովսիսյանի հիշատակին:

«Մեր պատանի տարիքում հանդիպեցինք եւ դարձանք երեք ընկեր՝ ես, դու, Կարենը: Քայլում էինք Երեւանի փողոցներում, իսկ առջեւից մեր տեսլականն էր գնում՝ անկախ, հզոր Հայաստանը: Կարեն Ավետիսյանը զոհվեց 1990 թվականի մարտի 22-ին մեր ազատամարտում մեր անկախության համար: Դու ամրագրեցիր մեր ազատությունը՝ վստահեցնելով, որ հազարամյակների խորքից ենք գալիս եւ վաստակել ենք նոր հազարամյակներ գնալու իրավունքը: Ես մեր նոր անկախության, վերակերտած պետականության մասին, որն արցախյան ազատամարտով էինք նվաճել, գրեցի բանաստեղծություն: Ճիշտ եմ համարում մեր անկախության եւ գոյապայքարի 30-ամյակի առիթով հրատարակվող այս գիրքը, քո թույլտվությամբ, ընծայագրել քեզ, ինչպես իմ առաջին եւ քո առաջին գրքերն էին ընծայագրված Կարենին: Այս գրքում կրկին միասին ենք՝ ես, դու, Կարենը, քայլում ենք Երեւանի փողոցներում, իսկ մեր առջ–ից գնում է մեր տեսլականը՝ ինքնիշխան, հզոր Հայաստանը»,- գրքում նշում է Հուսիկ Արան:

Բանաստեղծ Հուսիկ Արան աշխատել է «Գարուն» ամսագրում եւ «Գրական թերթ»-ում, Հայաստանի հանրային ռադիոյում վարել է «Գրական հանդիպում» հեղինակային հաղորդաշարը: Բանաստեղծությունների առաջին գիրքը՝«Մարդու որդիները», որ անկախության շարժումն ու արցախյան ազատամարտն է ամփոփում, տպագրել է 1996 թ., երկրորդ գիրքը՝«Լուսանցքի մարդիկ», որ ընկճված քաղաքն է պատերազմից հետո, տպագրել է 2003թ., բանաստեղծությունների երրորդ գիրքը՝ «Սեւագրություններ» վերնագրով, տպագրել է 2004 թ.-ին, որի համար 2005 թ.-ին արժանացել է Երիտասարդական խորհրդարանի «Տարվա լավագույն բանաստեղծ» մրցանակին: 2010թ. տպագրել է էսսեների եւ ակնարկների գիրքը՝«Անիծվածները», որի համար Հայաստանի գրողների միության կողմից արժանացել է Միքայել Նալբանդյանի անվան մրցանակի: 2011թ. «Միայնակ շան լուսնահաչը» վիպակի համար արժանացել է «Հայը՝ 21-րդ դարասկզբին» մրցանակի, որ տրվում է անտիպ գեղարվեստական արձակին: 2012թ. հանդես է եկել երկու գրքով՝«Աստծու հետ խոսելու ժամանակը» (բանաստեղծական ժողովածու), «Միայնակ շան լուսնահաչը» (արձակ): 2013 թ. հեղինակել է «Ազատության հրապարակ» բանաստեղծությունների ժողովածուն: 2008թ. արժանացել է Պարույր Սեւակի, 2012թ.՝ՀԳՄ Ավետիք Իսահակյանի անվան ամենամյա մրցանակների: «Ազատության հրապարակ», «Տան դուռը», «Երեւան քաղաք», «Եվ սերը ասաց» եւ այլ գրքերի հեղինակ է:

Նյութերը՝ ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻ

● *Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում նոյմբերի 19-ին, 20-ին տեղի կունենա Queen the Best համերգը: Տոմսերի արժեքը՝20000-35000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՆԱԻՐԻԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ պետք է անի անձը կենսաթոշակի անցնելու համար:

Դիանա Մելքոնյան (42 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Եթե անձը ձեռք է բերել կենսաթոշակի անցնելու իրավունք, ապա առաջին հերթին պետք է նախապատրաստի կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ փաստաթղթերը եւ դիմի իր բնակության (հաշվառման) վայրի կեսաթոշակ նշանակող մարմին: Տարիքային կենսաթոշակ նշանակելու համար նա պետք է ներկայացնի՝

1) դիմումը,
2) անձը հաստատող փաստաթուղթը,
3) հանրային ծառայությունների համարանիշը,
4) աշխատանքային ստաժը հաստատող փաստաթուղթը (աշխատանքային գրքույկը, անհրաժեշտության դեպքում՝ ստաժը հաստատող այլ փաստաթղթեր կամ արխիվային տեղեկանքներ),
5) սոցիալական վճար կատարած լինելու մասին ծառայության տված տեղեկանքը (կամ այդ փաստը հավաստող վճարման հանձնարարագրեր, անդորրագրեր) կամ գործատուի (Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու եկեղեցականի դեպքում՝ Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի կաթողիկոսարանի) տված տեղեկանքն աշխատավարձի չափի մասին՝ ըստ տարիների եւ ամիսների,
6) լուսանկար (4 x 6 սմ չափի):

Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումում նա լրացնում է աշխատակցի տրամադրած դիմումի ձեւը, որից հետո նրան է վերադարձվում դիմումի ծանուցումը, որտեղ նշվում է դիմումի գրանցման համարը, ընդունման ամսաթիվը, ընդունող աշխատակցի ազգանունը, անհրաժեշտության դեպքում՝ լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու ժամկետը:

ՀՀ աշխատանքի
եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Կենսաթոշակ նշանակելու համար բնակության վայրի մասին տեղեկանք չի պահանջվում, բավարար են անձնագրում քաղաքացու անձնական տվյալների եւ նրա հաշվառման վայրի մասին նշում պարունակող էջերի պատճենները:

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ որոնք են հայրության ճանաչման պետական գրանցման հիմքերը:

Հրանուշ Լալայան (37 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայրության ճանաչման պետական գրանցման հիմքերն են՝

1) երեխայի ծննդյան պահին ամուսնության մեջ չգտնվող մոր եւ երեխայի նկատմամբ իրեն հայր ճանաչող անձի համատեղ հայտարարությունն առ այն, որ երեխան սերվել է հայտարարություն ներկայացնող անձից,
2) սույն օրենքով նախատեսված դեպքերում մոր հետ ամուսնության մեջ չգտնվող, երեխայի նկատմամբ իրեն հայր ճանաչող անձի հայտարարությունն առ այն, որ երեխան սերվել է իրենից,
3) «Նոտարիատի մասին» օրենքով սահմանված կարգով նոտարի հաստատած իրավաբանական փաստի մասին նոտարական ակտը կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած համապատասխան վճիռը:

ՀՀ արդարադատության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ավելացնենք, որ հայրության ճանաչման գրանցումը կատարվում է առանց անձի տարիքային սահմանափակման, որի նկատմամբ այն ճանաչվում է:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Վայոց ձորում

ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի՝ Վայոց ձորի մարզային կենտրոնի տեսուչները ստուգում են անցկացրել անհատ ձեռնարկատեր Հենրի Հարությունյանին պատկանող կաթնամթերքի արտադրությունում (Վայոց ձորի մարզ, Գնդեվազ համայնք), որի ընթացքում առկա արտադրատեսակներից կատարվել է նմուշառում եւ ներկայացվել լաբորատոր փորձաքննության: Փորձարկման արդյունքներով՝ մածուն եւ թթվասեր արտադրատեսակների նմուշները ԱՑԽՄ (աղիքային ցուպիկի խմբի մանրէներ) ցուցանիշով չեն համապատասխանել Մաքսային Միության «Կաթի եւ կաթնամթերքի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգի պահանջներին:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝ (060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **9.08.2022**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: